Ձև N4

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2017 թվականի 4-րդ եռամսյակի դրությամբ

(ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի մասով)

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները	Կարծիք
1	2	3	4	5
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	110	«Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով նախատես-ված հատկացումների հաշվին աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (ժամկետ՝ 2017 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ)	Որոշման նախագիծը ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 2017 թվականի մարտի 2-ի N01/13/899-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը և ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N449-Ն որոշմամբ:	
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	111	«Հայաստանի Հանրապետությունում կիսակառույցների շինարարության ավարտման և հետագա օգտագործման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (ժամկետ՝ 2017 թվականի փետրվարի 2-րդ տասնօրյակ)	Որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել կոմիտեի 2017 թվականի փետրվարի 20-ի N01/14.1/677-17 գրությամբ, իսկ նախագծի՝ համապատասխան հանձնարարականների, կարծիքների և առաջարկությունների հիման վրա վերջնական լրամշակված տարբերակը՝ 2017 թվականի դեկտեմբերի 27-ի N01/14.1/7829-17 գրությամբ:	

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	112	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի N317 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (ժամկետ՝ 2017 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ)	Որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N01/13/5999-17 գրությամբ: ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության առաջարկությունների հիման վրա նախագիծը լրամշակվել, ՀՀ արդարադատության նախարարության հետ նորից համաձայնեցվել և վերջնական լրամշակված տարբերակը ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել 2017 թվականի դեկտեմբերի 25-ի N01/13/7733-17 գրությամբ:	
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	113	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը (ժամկետ՝ 2017 թվականի հունիսի 1-ին տասնօրյակ)	Որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել 2017 թվականի հունիսի 9-ին և ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N1645-Ն որոշմամբ:	